




ԳԵՎՈՐԳ Դ-Ի ԿՈՆԴԱԿԸ Կ. ՊՈԼՍԻ ՊՈՂՈՍ ՊԱՏՐԻԱՐԺԻՆ՝
ՎԱՏԻԿԱՆԻ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀՐԱՎԵՐԻ ԴԵՄ

(«Արարատ», 1870, փետրվար)

Գերապատիւ Պատրիարքի Կ. Պօլսոյ Պօղոսի Սրբազան Արքեպիսկոպոսի սիրելի Եղբօր մերոյ խնդալ:

Զյայտարար գրութիւն ձեր ի 14 դեկտեմբերի անցելոյ ընդ համարաւ 1417 ընկալեալ հանդերձ թարգմանութեամբ թղթոյ Սրբազան Հայրապետին Հռովմայ Պիոսի Թ. մատուցեալ Ձեզ ի կողմանէ փոխանորդի Նորին եղելոյ այդր ի Մայրաքաղաքիդ, և ընթերցեալ զայն ուշի ուշով տեղեկացաք դիտաորութեանն, որով մտադիր է կազմել ժողով ընդհանրական յՑն դեկտեմբերի այսր ամի ի Հռովմ. առ որ հրաւիրեալ է զՁեզ և զայլս:

Ըստ անհասանելի կամաց բարձրելոյն Աստուծոյ և մերս նուաստութիւն գոլով մի ի հովուապետաց Քրիստոսական հօտին, թէև ցանկամք միութեան կաթողիկէ եկեղեցոյ և փափաքիմք համապագ տեսանել զկրճմն հակառակութեան բարձեալ ի միջոյ, և զսէր և զխաղաղութիւն ի միութեան անդ Եկեղեցոյ թագաւորեալ. ըստ որում հակառակորդին է գործ ընդդէմ կալ միութեան մարմնոյ Եկեղեցոյն Քրիստոսի, բայց քաջ հաստ եղեալ մտաց և իմաստից թղթոյ ս. Պիոսի Թ. ցաւիմք յոյժ, զի բաղձալին և մեզ միութիւն, զոր կամի և Փրկիչն աշխարհի և աղօթէ առ Հայր թէ «եղիցին մի, որպէս և մեք մի եմք», անյուսալի իմն երևի այժմէն իսկ ի ժողովոյ անտի:

Եթէ իրապէս փափաքեալ էր Հռովմայ՝ միութեան եկեղեցոյն Քրիստոսի, ապաքէն պարտ էր կանխաւ հետամուտ լինել այնմ թէ՛ ուստի՝ սկիզբն էառ պառակտումն եկեղեցոյ ի միութենէ, և զմէ՝ արդեօք դաւանութեամբ և սիրով ի միութիւն Գլխոյն Քրիստոսի զօդեալ անդամք որոշեցան ի միմեանց, և ծագեցաւ ցաւալին այն բազմադարեան գծտութիւն յընդհանուր Քրիստոնէայս, ո՛չ ապաքէն որպէս քաջայայտ է բովանդակ աշխարհի՝ ծնունդ էր այն տքնութեանց Աթոռոյն Հռովմայ առ ի նախապատիւ և գերազան հանդիսանալ քան զայլ Աթոռս Արևելեայց:

Ապա ուրեմն ցանկալի էր ամենայն ճշմարտասիրաց տեսանել նախ զջանս Նորին Սրբազնութեան ի բառնալ զնախասկիզբն գծտութեան ի միջոյ և ընթանալ ընդ արահետ շաւիղս նախնի Հարցն սրբոց, և ըստ օրինի կանխապէս խորհրդակցեալ ընդ Արևելեան Եկեղեցոյ Հովուապետս իւրաքանչիւր Ազգաց՝ յայտնել կանոնական յօդաճովք զբուն նպատակ իւր և զկետս խնդրոց քննելեաց ի ժողովի անդ, և յետ ընդունելոյ զհաւանութիւն Նոցին՝ համակրութեամբ որոշել զտեղի և զժամանակ ժողովոյն:

Սակայն ի բաց թողեալ ս. Հայրապետին Հռովմայ զայն որ յղծալին հայի միութիւն ի Յիսուս Քրիստոս, ինքնին հաճեալ է հրատարակել նախ զօրինակ:

հրաիրական թղթոյ, և ապա առաքել զայնս առ Հովիս Եկեղեցոյ, որով ի կարծիս տայ ձկտիլ ամենեցուն թէ՛ Նորին Սրբազնութիւն կամի զամեն իր ցուցանել գերագոյն իշխող, և գլուխ Քրիստոնեւորեան՝ ոչ ճանաչելով զՀովնապետս Արևելեան եկեղեցոյ համապատիւս ինքեան աստիճանօք և իրաւասութեամբ և Առաքելական յաջորդութեամբ պատուելաւ, զորս Հոգին սուրբ հաւասար իշխանութեամբ և շնորհօք զարդարեաց: Եւ զի զԱթոռն Հռովմայ բացալայտ հռչակէ ի թղթին կեդրոն միութեան, զոյսիսի վարդապետութիւնս ոչ ընդունի սուրբ և ուղղափառ եկեղեցին Հայաստանեայց ընդ այլոց ազգաց Արևելեան եկեղեցեաց՝ Գլուխ Եկեղեցոյ զՓրկիչն մօր միայն՝ զՔրիստոս ճանաչելով:

Նա որ խնդրէ զմիութիւն եկեղեցոյ, զանց արարեալ զկարի կարևորօք, որք պարտ էին լինել անշեղի հիմն գումարման ժողովոյն, իրովն կարծեցեալ միապետական գերիշխանութեամբ ինքնին իսկ ևս քան զևս հեռանալ ի միութենէ Կաթողիկէ Եկեղեցոյ. և ո՞ւմ չիցէ յայտնի՝ թէ յայնպիսի սկզբանց հակառակելոց իմաստից ողջամիտ վարդապետութեանց սրբոյ Աւետարանին, դժուարին է ակնունել ճշմարիտ միութեան, թերևս նորանոր վէճից և անդարմանելի պատակտմանց ևս և դառնագին հակառակութեանց բացցին ասպարէզ ի գայթակղութիւն բազմաց և ի նախատինս Քրիստոնէական սուրբ կրօնի:

Ապաքեն մեք որ յամենայն ժամ տքնիմք վասն հոգւոց ի Քրիստոս հաւատացեալ ժողովրդոց յանձնելոց մեզ ի Տեառնէ և ջանամք պահել զանդորրութիւն Հօտին մերոյ, և պարծիմք Տերամք յԱռաքելական սուրբ Եկեղեցին մեր, որ ի ձեռն սրբոց Առաքելոցն Թադէոսի և Բարթողիմէոսի հաստատեցաւ ի Վէմն Քրիստոս. Եւ աղօթիւք բազմաչարչար նահատակի Ս. Գրիգորի մեծի Հայրապետի ցալսօր կայ անդորրուելի ի դրանց դժոխոց ինքնուրոյն իրաւասութեամբ, հարկ անհրաժեշտ համարիմք ծանուցանել Սրբազան Եղբայրութեան ձերում զգոյշ լինել ի հրաիրմանէ անտի և ի ժողովոյ որ զրկեալ գտանի ի հիմանց օրինաւորութեան և զգուշացուցանել նաև զԱրքեպիսկոպոսոմս, և զամենայն Առաջնորդս վիճակաց և Եկեղեցեաց մերոց որ ի Տանկաստան, չտալ տեղի շփոթից և տարաձայնութեան:

Եւ միաբան աղաչեցուք յամենայն սրտէ, որպէս և միշտ աղաչեմքս, զի Գլուխն անկեան և խաղաղութիւն Եկեղեցոյ սրբոյ Քրիստոս Փրկիչն ամենեցուն, որ արար խաղաղութիւն արեամբ խաչին իրոյ կոչելով զամենեւին ի մի արօտ Աւետարանական վարդապետութեան, պահեցէ ի խաղաղութեան գեկեղեցի իր սուրբ, և զԱզգս Հայոց պահպանեցէ յանակնունելի փորձութեանց:

Ողջ լերուք զօրացեալ Տերամք:

Համար 31

ի 11 փետրուարի

